

նին մէջ կ'անուանէ «որդի քեռ հօրն Մի- քայէլը»: Թերեւս իմացուի նաև Միքայէլի քեռորդին, ուստի Վարազվազէի Թոռնիկը:

ՉՈՐՏՈՒՄԱՆԷԼ Ե.

Մատթ. Ուռհ. յամն 1049/50 կը գրէ (էջ 107). «Յորժամ հասանէր զօրքն Յունաց ի յարեւելք՝ Կամենն եւ Առօնն եւ Գրիգոր Վա- սակայ որդին՝ կոչեցին զհետ իւրեանց զԼի- պարիտն զՎրաց իշխանն. եւ հասեալ նոցա ի բերդն որ կոչի Կապուտու» կ'ամբայնան. «յայնժամ եկին զօրքն այլազգեացն ի վերայ Լիպարիտն՝ առն քաջին. եւ նորա հանեալ զպահապանս ի գիշերի՝ զքուերորդին իւր զՉորտուանէն՝ զայրն հզօր եւ պատերազ- մող»: Օրը շարաթ ըլլալուն Լիպարիտ չու- գեր բերդէն դուրս դալ. «յայնժամ Չորտուա- նէն որպէս առիւծ ի գիշերին բախէր զճա- կատ այլազգեացն. եւ մինչդեռ վարէր զնո- սա, զիպեալ եղև նեա մի ի բերան նորա եւ ընդ ծոծրակն ելանէր եւ այնպէս մեռանէր Չորտուանէն, այրն քաջ եւ հզօր»:

Այս հատուածին մէջ չէ յիշուած Չոր- տուանի չայրանունը. որով չենք կրնար Թոռնիկեանց ծառին մէջ իր տեղը գտնել: Բայց հետաքրքրական է, որ անոր մայրը Լիպարիտի քոյրն էր:

Բիւզանդական գրականութեան մէջ կը

յիշուին դեռ ուրիշ Թոռնիկներ ալ, որոնք գործած են Կ Պոլիս ԺԲ. դարուն: Յիշենք հոս՝

Գեորգ Թոռնիկ, կոչուած μαϊστωρ τῶν ρητόρων. գրած է Ներքողեան մը Իսահակ Անդեղոս կայսեր վրայ. եւ ուրիշ մըն ալ Գէորգ պատրիարքի (1192—1199) վրայ ³²:

Դեմետրիոս Թոռնիկ եպիսկոպոս Կա- տորիայի, որ յայտնի է իւր Լատինացոց ղէմ գրած հակաճառութիւններով ³³:

Եւքիմիոս Թոռնիկ, որ խօսած է դամբա- նական մը Աթէնքի Նիկողայոս մետրապոլիտի († 1175) վրայ ³⁴:

Անդրոնիկոս Թոռնիկ Կոմնենոս, ԺԳ. դա՞ր, որուն տապանադիրը կը յիշուի ³⁵:

6. Ինչպէս ցոյց կու տայ պատմութիւնը, Թոռնիկեանց այս ճիւղը երեւելի հանդիսացաւ աւելի իւր ծառայութիւններով բիւզանդական բանակին մէջ: Միշտ աւելի բարձր դիրքի ձգտելով՝ հեռացան բնիկ ժառանգութենէն, զաղթեցին զէպի կայսերանիստ մայրաքա- ղաք, հոս կամայ ահամայ միջամուխ եղան քաղաքային եւ քաղաքական դաւադրութեանց մէջ, նոյն իսկ ի խնդիր կայսերական թաղին, եւ կրեցին միշտ պարտութիւն: Թոռնիկ Բ. «Մեծ», ինչպէս կը կոչեն զինքը ժամանա- կակիցները, եղաւ միակ պարծանքը տոհմին: Թերեւս մասամբ մայր երկրի անապահո-

վութեան եւ մասամբ օտարասիրութեան պատճառաւ նաև վանական անդորրութեան հետամուտները վնասեցին հեռուները իրենց ճգնախայր: Ս. Լեոան վրայ բացուած Վրաց վանքը, թէպէտ օժանդակեց վրական գրականութեան պայծառութեան, բայց եղաւ ազի- տարեր հայրենի մենաստաններուն համար, որոնք եղան մարդաթափուր: Աթոսի մէջ՝ շրջապատուած յոյն մենաստաններէ, ենթար- կուեցան վանականք յոյն ազդեցութեան. ու- շադբաւ են Վարազվազէ Բ. ի յունամէտ ձգ- տումները: Նոյն հոսանքին կուլ եկան նաև այն Թոռնիկեանք, որոնք ուղեցին իրբեւ հոս- տոր կամ մատենագիր փայլել:

Թոռնիկեանք հայ էին ծագումով: բայց դաւանեցան իրենք զիրենք նախ վրացի եւ ապա յայն. եւ իրբեւ սյապիսի ձուլուեցան յոյն տարրին հետ եւ անհետ եղան պատմութենէ:

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԵՐՈՒ ՍԿՋԻՆՆԵՐՈՒ- ԹԻՆԵՐ ԸՍՑ Յ. ՄԱՐԿՈՒԱՐՏԻ

Մեծանուն հայագէտին թողած անտիպ գրութիւնները մէջ կը գտնուի նաև գեղեցիկ եկեղեցադատմական ուսումնասիրութիւն մը այս խորագրով «Հայկական եպ. թեմերու սկզբնաւորութիւնը. հայ աւանդութեան քննա- կան ուսումնասիրութիւն ¹»: Հ. Յ. Մեսինա կարեւոր համարած է իրաւամբ հրատարակել զայն Orientalia Christiana շարքին մէջ: Հան- գուցեալ հեղինակը դեռ վերջին գոյնը չէր տուած գործին, ինչպէս գրութեան վիճա- կէն կը տեսնուի ². նա հաւանօրէն մտա- զիր էր դեռ բանիլ վրան, երբ մահը վրայ հասաւ: Թէպէտ գրութիւնս իւր վերջնա- կան խմբագրութեամբ ըլլաւ չէ տեսած, բայց եւ այնպէս կը բովանդակէ թանկագին նիւ- թեր հայ աշխարհիկ ու եկեղեցական պատ- մութեան, աշխարհադրութեան եւ ժամանա- կագրութեան համար. մենք կը բաղձանք հե- ղինակին զլիսաւոր նպատակը՝ հայ թեմերու սկզբնաւորութիւնը ներկայացնել հայ ընթեր- ցողներուն համառօտ ամփոփմամբ:

¹ J. Markwart, Die Entstehung der armenischen Bistümer. Kritische Untersuchung der armenischen Überlieferung. Herausgegeben von J. Mes- sina S. J. Roma 1932. [Orientalia Christiana, Vol. XXVI. — 2.]
² Յատաշարան, էջ 5—6:

Եպիսկոպոսներու քիւր: Հայ եկեղեցա- կան պատմիչները կը սիրեն մեծ թիւով ներ- կայացնել հայ եպիսկոպոսներն ու թեմերը: «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի», որ առանց տարակոյսի ԺԲ. դարէն ³ է, Ներսէսի զէպի Կեսարիա ձամբորդութեան ուղեկից կը զնէ յանուանէ 13 եպիսկոպոս՝ թեմերով ու կը յաւելու «եւ այլ հնգետասան եպիսկոպոսք, որ պատրաս- տեցան ընդ իշխանսն»: Փաւստոս չի զիտեր ամենեւին, որ Ներսէսի եպիսկոպոս ընկերա- ցած ըլլայ. կը յիշէ սակայն թէ Ներսէսի ըն- տրութիւնը խնդրելու համար Արշակ թագա-ւորին եկած էին նաև «բազմութիւն եպիսկո- պոսաց Հայոց» ⁴:

Ուխտանէս առանձին գլխով կը խօսի այն


³ Պատմութիւն սրբոյն Ներսիսի: Վենետ. 1853, էջ 25—26 (Սոփերք Հայի. 2.): Փաստեր՝ հոն կը յիշուին Ուղեքը, էջ 70, 79: աղեղնաւորներու արշաւը, էջ 91: Երուսաղէմի Հոռոմայեցիներէն—Փրանդաներէն վերստին առնուելը, էջ 90: Կը գործածուի Սուտն—Մեթոսիոս, Յովհ. Կոզեան, Յովհ. Սարկաւազ, Մելիտինէն հայ ազգի եպիսկոպոս կը յիշէ, որ առաջին անգամ ԺԱ. դա- րուն եղած է:

⁴ Փաւստ., Պատմ. Հայ., Վենետ. 1832, Դ. 4, էջ 71—72:

Պրոֆ. Մարկուարտ գործքին կցած է հետաքրքրա- կան ճշգրտմաներ Ներսէսի կեանքին հայոց. հոս կ'ամ- փոփնէր զայն:

Փաւստոսի համաձայն՝ Ներսէսի ընտրութիւնն անմիջապէս կը յաջորդէ Արշակի դահակութեան, որուն թուականը սակայն որոշ չէ: Տիրակ թագաւորի եւ Արշակի Պարսից գերութենէն ազատագրուած՝ Վա- ղէսի եւ Ներսէսի միջև խաղաղութեան դաշինք մը գոյանալուն պատճառաւ եւ Արշակի՝ շահէն թագաւոր պատկուելը պատմական արժէք չեն ներկայացնէր. այլ միայն յիշատակն են Գաղերիոսի եւ Ներսէսի խաղա- ղութեան գաշնագրին (298): Թէ Տիրան ինչ վախճան ունեցաւ, կը մնայ անյայտ. տ. Die Entstehung, p. 221—222: Ս. Աթանոսի 358ին անապատականներու ուղղած ջատագովութիւնը կրնայ մեզի ժամանակա- գրական կողման ծառայել. ան կը յիշէ իրր նոր զէպք մը՝ Արշակի Ողիմպոսի հետ ամուսնութիւնը. Փաւ- ստոս կը պատմէ պատգամադրութիւն մը Ներսէսի զխաւորութեամբ, որուն նպատակն էր դաշինք կնքել, աւելի ճիշտ՝ նորոգել, եւ անտարակոյս՝ արքային բարձրատիճան հարս մը գտնել: Շատ հաւանական է, որ Արշակի ամուսնութիւնը տեղի ունեցած ըլլայ 357ին, վասն զի Ս. Աթանոս իրբեւ բոլորովին նոր զէպքի մը վրայ կը խօսի: Քաղաքական պատճառնե- րով՝ այդ պատգամաւորութիւնը եւ ամուսնութիւնը տեղի ունեցան անտարակոյս Արշակի դահակութեան եւ Ներսէսի աթոռակալութեան սկիզբը, որ այս հի- ման վրայ՝ կարելի է զնել 358ին, ամէնէն կանուխ 355ին: 360ին դեռ, երբ Արշակ Կեսարիա գնաց Կոս- տանդինոս կայսեր հետ բանակցելու, այդ ամուսնու- թեան որոշ չափով իրր խնամութիւն, քաղաքական մեծ նշանակութիւն կ'ընծայուէր: Հաւանաբար ամուս- նութեան յաջորդ տարին՝ 358ին կործանեցաւ Արշա- կաւան, որմէ քիչ յառաջ վերագարծած էր կաթողի- կոսը. հետեւաբար Ներսէսի «ինն անս» արքայի լիւր, պէտք ենք ուղղել իրր «ինն ամիսս» բացակայել: Այս- չափ երկար ժամանակ թերեւս նա կեցաւ Եւստատիոս Սերաստացոյն քով, վասն զի Ներսէսի յաջորդ ազբո- սախնամ գործունէութիւնը շատ կը նմանի Սերաստաց- ոյն ուղղութեան, եւ ասով կարելի է մեկնել. տես Die Entstehung, p. 223—231:

ԹՈՐՆԻԿԵԱՆՅ ՏՈՂՄԱԾԱՌԸ



³² Krumbacher, Geschichte der byzantinischen Literatur, 1897, էջ 472—473:
³³ Անդ., էջ 91, 442, 425. Բազմազգայ, 1908, էջ 391—392:

³⁴ Հմմտ. Byz. Zeitschrift 11 (1902), 684:
³⁵ Հմմտ. Byz. Zeitschrift 5 (1896), 552:

Եպիսկոպոսներու մասին, «որք ընկալան աթոռ ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորի յերաքանչիւր գահս»։ Կը թուէ 30 թեմ ու կ'ըսէ «այս երեսուն եպիսկոպոսք, որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ, եւ այլ եւս երեքհարիւր եւ եւթանասուն եպիսկոպոսք, որ եւնոքա կարգեցան ի տեղիս տեղիս տեսուչք եւ առաջնորդք յերաքանչիւր գաւառս ի փառս Աստուծոյ»⁵։ Այնպիսի հսկայ թիւ մը կը մտածէ Ջենոր Գլակ, երբ Տրդատի բերանը զնկելով այս խօսքը կ'ըսէ՝ «Գրիգորէ եթէ ամենայն գաւառացս եպիսկոպոս պիտոյ են եւ քահանայս, զի թէպէտ ոմանք, որք ուստեք ուստեք եկեալ են ժողովեալ, բայց զի՞նչ են այսոքիկ առ վեցհարիւր եւ քսան գաւառս Հայոց, որ եւ գաւառին մէջ մի քահանայ կամ երկու լուկ թէ հանդիպի»⁶։ Ազաթանգեղոս կը հաստատէ՝ «Բազմացոյց կացոյց (Գրիգոր) տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իւրոյ, եւ որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ աւելի քան զսրբեհարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց։ Իսկ կարգք երեցանց կամ սարկաւազաց կամ անագնովաց, եւ որ այլ եւս ի պաշտօն Տեան կային՝ անթիւք էին ի բազմութենէ»⁷։ Մանրամասնութեան իջնելով սակայն կրնայ միայն 12 եպիսկոպոս յիշել՝ «Եւ զամենս յորդոց քրմացն առեալ իւր առաջեալասունս ձեռնասունս առնէր, փոյթ ուսման ի վերայ ունէր՝ ընդ հոգեւոր խնամով եւ երկիրիւ սնուցանել։ Որ յաստիճան եպիսկոպոսութեան լինէին արժանի կարոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ, որոց առաջնոյն Աղբիանոս անուն, որ սպա կողմանցն Եփրատայ գետոյն լինէր վերակացու. երկրորդին՝ Եւտաղիոս, որ ի կողմանս վայրացն Բասենոյ կացեալ լինէր հովիւ. երրորդն՝ Բասոս, չորրորդն՝ Մովսէս, հինգերորդն՝ Եւսեբիոս, վեցերորդն՝ Յովհաննէս, եօթներորդն՝ Ազապէս, ութերորդն՝ Արտիթէս, իններորդն՝ Արսուկէս, տասներորդն՝ Անտիոքէս, մեասասներորդն՝ Տիրիկէս, երկուսասներորդն՝ Կիրակոս։ Այսք՝ որ յորդոցն քրմացն ընտրեցան լինել եպիսկոպոսք կողմանց կողմանց աճեցուցանել զքարոզութիւնն։ Եւ գայլոցն

⁵ Ուխտանէս, Պատմ. Հայոց. Ա., Վաղարշապատ 1871, էջ 100:
⁶ Ջենոր Գլակ, Պատմ. Տարոնոյ, Վենետ. 1889, էջ 12:
⁷ Ազաթ., Պատմ., Տիրիս 1909, էջ 448:

անուանս թէ եւ կամիցի ոք՝ ոչ կարացէ շառնել»⁸։
 Վերջին խօսքը կը ցուցնէ թէ Ուխտանէսի յականէ յիշած երեսուն եպիսկոպոսներն իրրեւ Լուսաւորիչէն ձեռնադրուած՝ Ազաթանգեղոսէն չեն հաստատուիր. բայց ուշագրութեան արժանի է, որ Ազաթանգեղոսի բերած 12 եպիսկոպոսներու ցանկը՝ վերաքննութեան չի դիմանար։ Նախ՝ ցանկին երկու վերջին անունները՝ Տիրիկէս եւ Անտիոքոս չկան Ազաթանգեղոսի յուշարկէն թարգմանութեան մէջ, հայերէն ձեռագիրներէն միայն Պարիսի Չ. Գ. ունի եւ դարձեալ՝ յունարէնէ թարգմանուած արաբերէն «Մկրտութիւն Հայոց, Վրաց, Ափրազաց եւ Աղուանից ի ձեռն սրբոյն Գրիգորի» գրութեան մէջ կը գտնենք զանոնք։ Յայտնի կը տեսնուի թէ անոնք առնուած են Փաւստոսի վերջին դրոշմէն. Տիրիկէս՝ Տիրիկն է, Բասենի եպիսկոպոսը, Կիրակոս՝ համանուն եպիսկոպոսն է Տայքի, որ Ծահապ ալ կը կոչուէր⁹։ Ասոնց զահակալութեան շրջանը կ'իշխայ Հայաստանի երկրորդ բաժանման ժամանակ։ Ութերորդ եպիսկոպոսն Արտիթէս՝ Փաւստոսի Արտիթն¹⁰ է, Բասենի եպիսկոպոսը, Խոսրով եւ Արշակ թագակիցներու ժամանակ, Դանիէլի աշակերտ։ Արսուկէս եպիսկոպոսն ալ կը գտնենք Փաւստոսի քով քիչ մը փոխուած ձեւով՝ Ասրուկ (սեռ. Ասրկոյ), Խազի, Բազրեանդի եւ Արշամունիքի եպիսկոպոսին փեսան, որ յետոյ իրեն կը յաջորդէ եպիսկոպոսական աթոռին վրայ¹¹։ Չարմանալիորէն յոյն — արաբ գրութեան հեղինակը պահած է Ասրուկի թեմին ճիշտ յիշատակութիւնը՝ «եւ (Գրիգոր) Ասրուկէս եպիսկոպոսս ըրաւ եւ զրկեց Եփրակի գաւառը»։ Եփրակ Դ. դարու երրորդ քառորդին՝ Բագրեւանդի հետ մէկ թեմ կը կազմէր։ Բայց այնչափ յաջող չեն միւս չորս եպիսկոպոսներուն ըրած վերադրումները. Արտիթէս կը գնէ Մաղխազութեան տան՝ այսինքն Խորխոսուհեաց եպիսկոպոս, ուր Չ. դարուն սկիզբ եպիսկոպոս կը յիշուի¹²։ Կիրակոս կ'ըլլայ Արշամունեաց եպիսկոպոս, Արշամունիքի թեմը Չ. դարուն սկիզբ գոյութիւն ունէր¹³։ Անտիոքէս կը յիշէ իրր Կորզովտաց, իսկ Տիրիկէս իրր Ատրպա-

⁸ Անդ, էջ 441—442:
⁹ Փաւստ., էջ 270:
¹⁰ Անդ, էջ 265:
¹¹ Անդ, էջ 109:
¹² Գրիգ. Թղթոց, էջ 41:
¹³ Անդ, էջ 42:

տականի եպիսկոպոս, ուր է. դարէն ետք եպիսկոպոսական թեմ գոյութիւն ունեցած է։
 Ուրեմն Ազաթանգեղոսի ցանկին վրայ կ'ունենանք, չորրորդ եպիսկոպոսն ալ համարելով Բասենի համանուն Մովսէս եպիսկոպոսը՝ առնուած Փաւստոսէն, միայն եօք եպիսկոպոս, եւ ցանկը կը վերակազմուի այսպէս՝
 1. Աղբիանոս, Մանաւազկերտի եպ.,
 2. Եւթաղիոս, Բասենի եպ.,
 3. Բասոս,
 4. Եւսեբիոս,
 5. Յովհաննէս,
 6. Ազապէս,
 7. Անտիոքէս¹⁴։
 Այս անուններէն ամէնքն ալ զուտ յունական—լատինական են, մասամբ զուտ քրիստոնէական, ուստի շատ անհաւանական է, որ դարձած քուրմերու որդիներն ըլլան անոնք. աւելի հաւանական է ընդունիլ թէ Գրիգորի Կեսարիայէն բերած եղբայրներէն ըլլան։ Լուսաւորիչին Գրիգոր անունն ալ, զոր Սքանչելազործի յիշատակին կը կրէ, կարծես կը ցուցնէ, որ ինքն ոչ թէ Կեսարիա, այլ Նէոկեսարիա Պոնտացոյց մեծցած է¹⁵։
 «Եպիսկոպոսներու» պաշտօնը։ Ազաթանգեղոս միայն Աղբիանոս «եպիսկոպոսի» մասին կ'աւանդէ թէ «արքունական դրան բանակին» վերակացու դրուեցաւ¹⁶։ Նա կ'ընկերանայ Տրդատի՝ Լուսաւորիչին եւ Արիստակէսի հետ դէպի Հոռոմ¹⁷։ Այս վկայութիւնը սակայն չի կրնար հին ըլլալ, վասն զի Ազաթանգեղոս այդ ճամբորդութեան իբր ուղեկից կը յիշէ Նորջիրականի բղեալը, որ սակայն Հայոց թագաւորին տակ չէր, եւ կը զանազանէ Աղձնիքի բղեալը՝ Արուեստական կողման բղեալիէն, որ ճիշտ չէ։ Դժբախտաբար Տրդատի դէպի Հոռոմ ճամբորդութիւնը այլուտ չի հաստատուիր։
 Աղբիանոսի մասին շատ կարեւոր տեղեկութիւն մը կու տայ Փաւստոս։ Խոսրով Բ. ի ժամանակ արիւնալից ազգակոտոր կռիւ մը կը ծագի Մանաւազեան եւ Որդունի նախարարական տուներու միջեւ, որոնք Աղբիանոսի միջնորդութեամբ չեն խաղաղիր, մինչեւ Վաչէ գորավարը՝ արքայական հրամանով կը ջնջէ երկու տուններն ալ։ «Եւ ետ (Խոսրով) գաւանս եւ զըուն գահայից զիւզն նահապետին Մանաւազեանից՝ եպիսկոպոսին Աղբիանոսի՝ յիկեղեցի, զՄանաւազկերտ ամենայն սահմա-

¹⁴ Die Entstehung, p. 159. 186:
¹⁵ Die Entstehung, p. 186—187:
¹⁶ Ազ., էջ 442:
¹⁷ Ազ., էջ 458:

նօքն եւ գաւառակաւ հանդերձ, որ չուրջ զնօքք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ։ Եւ ետուն զըուն գեւղն Որդունեոց, որոյ անուն էր Որդորու, ուստի եպիսկոպոս Բասանու (Մարկուարտ կը սրբազրէ «Եւտաղի, եպիսկոպոսին Բասանու») ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասանու»¹⁸։
 Այս թանկագին տեղիքէն կը տեսնենք, որ Ազաթանգեղոսի ցանկին գլուխը կեցող Աղբիանոս ու Եւտաղիոս յատուկ քեմերով եպիսկոպոսներ չէին, եւ երկու նախարարութեան աննիտացմամբ քեմ ստացան։ Եթէ սակայն անոնք իրական եպիսկոպոսներ չէին, մնացած հինգն առաւելապէս պիտի չըլլան¹⁹։ Միւս կողմէ կը տեսնենք թէ կաթողիկոսականը ազգատ չէր. Ներսէս կաթողիկոսի ժամանակ «հնգետասան գաւառ գայն ձեռական իշխանութեան ունէին իբրեւ սեպական ի բնիկ, առանձին առնողի նոցա էր կարգեալ։ Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք եւ որ ընդ մէջ նոցա եւ որ չուրջ զնօքք»²⁰։ Ուրեմն կարուածի պակասը չէր որ Գրիգոր Լուսաւորիչին արգելք եղաւ թեմ կանգնելու։
 Այդ եպիսկոպոսներու «պաշտօնին ու ստատիճանին մասին» կարեւոր լուսարանութիւններ կու տան Փաւստոսի ի մէջ այլոց հետեւեալ տեղիքները. Ներսէսի համար կ'ըսէ՝ «չինէր զամենայն աւերակն երկրին Հայոց, յանձն առնէր եւ մխիթարէր, դարմանէր եւ տեսուչ լինէր ամենայն ազգատաց, եւ զօրկուս եւ զաղքատս հանդուցանէր»²¹. . . : Եւ բազմացոյց զկարգս պաշտօնէից յամենայն տեղիս իշխանութեանն ի սահմանացն Հայոց, եւ յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոս, եւ հանապազ զգուշանայր տեսուչութեանն իւրոյ եւ իշխանութեանն, որչափ եկաց նա ժամանակս»²²։ Այս պաշտօնը թանձրացեալ կը տեսնենք Խազի, Բագրեւանդի եպիսկոպոսին գործունէութեան մէջ, զոր Ներսէս պատգամաւորութեան գացած ժամանակ՝ տեղապահ թողուց եւ որուն «աղքատաց եւս տեսուչութիւնս յանձնեց»²³։ Ներսէս վերադար-

¹⁸ Փաւստ., էջ 9:
¹⁹ Die Entstehung, p. 165:
²⁰ Փաւստ., էջ 113—115:
²¹ Այս հաստատման չի յիշեր Մարկուարտ, Die Entstehung, p. 183:
²² Փաւստ., էջ 213—214:
²³ Անդ, էջ 105—109:

ձէն ետք՝ Յովհաննէս Մկրտիչի տօնին, երբ ժողովրդեան հետ «եւ բազում եպիսկոպոսք, որ յայլոց դաւառաց» ժողովուած էին Բագաւան, հոն կը զրկէ «զիւր աթոռակիցն զՍաղ, եւ զիւր արքիւղիակոնն եպիսկոպոսին (Մարկուարտ կը կարդայ «զիւր արքիւղիակոնն՝ եպիսկոպոսն») որում անուն Մուրիկ կոչէր, զի երթիցեն նոքա, պէտք զինչ եւ իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն»²⁴ :

Ծանրակշիռ նշանակութիւն ունի այս հարցի լուծման համար պատմագրին այս փոքրիկ դուրիւր. «Յաղագս Փաւստայ եւ Չորթայ եպիսկոպոսաց : — Էր առ այնմ ժամանակաւ (բաժանման ժամանակ) Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներսէսի եպիսկոպոսապետին էր ի տան նորին իբրեւ թելակալ : Սոյնպէս Չորթ, այր ներքինի, ընդ նոսին, քանզի էին ի ներքին հայրապետին՝ ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկրտասան եպիսկոպոսք. աթոռակիցք իւր զործակիցք եւ խորհրդակիցք : Թող զայլոց դաւառաց ամենայն եպիսկոպոսեանն, որ ընդ նովաւ, այլ երկուքեան սոքա յայն երկրտասանիցն, եւ էին սոքա ի տեսչութիւն աղքատացացն հաւատացեալք, եւ յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա, եւ յամս Սոսորովու (Գ.) եւ Արշակայ (Գ.) երկուց թագաւորացն բաժանաւորացն, մինչ զեռ եւս կային նոքա կենդանիք»²⁵ : Ասկէ կ'եղբարկացէ Մարկուարտ. «Այս բոլոր տեղիքներէն կը տեսնուի թէ Ներսէս կաթողիկոսի արքունիքին մէջ տասնուերկու պաշտօնեաներ կային, որոնց ձեռքն էր անտեսութիւնը, եւ որոնց մասնաւորապէս յանձնուած էր աղքատներու հոգաբարձութիւնը : Յայտնի անոնց կարգէն էր Սաղ, զոր Ներսէս եպիսկոպոսապետն անձամբ սնուցած եւ որուն աղքատներու տեսչութիւնն յանձնած էր : Ներսէս երբ Կ. Պոլիս պատգամաւորութեան գնաց (հաւանարար 357ին)՝

²⁴ Անդ, էջ 116—117 : Սաղին անունը զարմանալիորէն ժամանակակից յիշատակարանով մը հաստատուած է, ինչպէս կ'ըսէ Մարկուարտ : Հռոմէական աշխարհացոյց քարտէսի մը մէջ Արտաշատ—Սատաղ պոլիսի վրայ Ռատուրանիայէն (Բագաւան) դէպի արեւմուտք գրուած է Chadas, XXIII իբր ամուր կայան մը : Մարկուարտ մանր կը խուզարկէ դրացի կայանները աշխարհագրական գրքին վրայէն (էջ 175—181) եւ կը գտնէ թէ Սաղաս Բագաւանի կողմ կ'իյնայ եւ «ակնյայտնի Սաղի եկեղեցին կը նշանակէ» (անդ, էջ 181) : «Ուրեմն Սաղ Բագաւանի եպիսկոպոսական Մայր Եկեղեցին էր գործածէր, վասն զի իւր ծուխը Բագաւանի եւ Արշարունիքի վրայ տարածուելով՝ այդ շատ կողմնակի պիտի իյնար, հապա նոր եկեղեցի մը կառուցած էր որ աւելի կենդանական տեղ մըն էր» (անդ, էջ 181) :

²⁵ Փաւստ., էջ 264—265 :

զայն տեղապահ թողուց եւ Բագաւանի ու Արշարունիքի եպիսկոպոս ըրաւ» : Սաղ իբրեւ եպիսկոպոս՝ իւր զլիաւոր պարտականութիւնն ըրաւ աղքատներու խնամատարութիւնը : «Ուրեմն անոր զիրքը լիովին կը համապատասխանէ Լաւրենտիոս սարկաւազի զիրքին : Ներսէսի վերադարձէն ետք՝ ինքն ու արքիւղիակոնն եպիսկոպոսն Մուրիկ՝ Բագաւանի տարեկան մեծ տօնին իբրեւ կաթողիկոսական փոխանորդ կը դործեն : Ուստի Մուրիկ, ինչպէս յայտնի կը տեսնուի, Սաղի թեմ ստանալէն ետք, անոր յաջորդէր իբր արքիւղիակոնն : Ներսէսի մահուան Տրդատ կամ Տրդած արքիւղիակոնը կը գտնենք : Ուրեմն կաթողիկոսին տասնուերկու արքունակիցները, որոնց մէջ ներքինի մըն ալ կը գտնուէր, իրականին սարկաւազ, վարիչ պաշտօնեայ էին, եւ «եպիսկոպոս» տիտղոսն իւր նախնական իմաստով իբր «տեսուչ, վերատեսուչ» կը կրէին²⁶ :

Պայծառ չէ թէ ի՞նչ զիրք ունէր Փաւստոս եպիսկոպոսն այս արքիւղիակոններու հանդէպ : Պատմագիրը զայն՝ Ներսէսի դահաւկալութեան արդէն եպիսկոպոս եւ ձեռունի կը ներկայացնէ, եւ որ կ'ապրի Հայաստանի բաժանումէն ետքն ալ, որով Տրդատէն մինչեւ Բաժանումը՝ ակնատեսի հանդամանք կը զգենու, անտարակոյս Կորնելի օրինակին վրայէն իբրեւ պայման կենսագրութիւն գրելու : Այս հսկայ շրջանը տարակոյս կը դարձնուի թէ Փաւստոս՝ Ներսէսի դահաւկալութեան իրապէս եպիսկոպոս եղած ըլլայ : Եստ հաւանական է, որ այս Փաւստոս եպիսկոպոսը նոյն ըլլայ այն Փաւստոսին հետ, զոր Պապ Կեսարիոյ Բարսեղ մետրապոլիտէն եպիսկոպոս ձեռնադրել տալ ուղեց, բայց ուրիշ կուսակցութիւն մը՝ Կիւրեղ անուն մէկն ընտրեց : Փաւստոս Սատաղայի եւ Նիկոպոլոսայ եպիսկոպոսներէն յանձնարարական չունենալուն պատճառաւ՝ Բարսեղէն մերժուեցաւ եւ գնաց Բ. Կապադովկիոյ Անթիոս մետրապոլիտէն ձեռնադրուեցաւ. ուստի Փաւստոս 373ին միայն իրական եպիսկոպոս կ'ըլլայ²⁷ :

Ներսէսի արքունիքին 12 եպիսկոպոս—սարկաւազներու փոխան՝ Լուսաւորիչէն ձեռնադրուած 7 «եպիսկոպոս» կը գտնենք, որոնք նոյնպէս սարկաւազ էին²⁸ եւ անոնցմէ երկուքը՝ արքիւղիակոն Աղբրիանոս եւ Եւթաղիոս

²⁶ Die Entstehung, p. 148—186 :
²⁷ Անդ, էջ 185—186 :
²⁸ Անդ, էջ 186 :

Վրթանէսի ժամանակ իրական թեմերով օտտուեցան : «Ուստի կ'երեւայ թէ հայ Եկեղեցւոյ հիմնարկութեան ժամանակ նախնարար՝ Գործք Առաքելոցի (Ձ. 1—6) օրինակին վրայէն եօթ սարկաւազ, վերակացու = եպիսկոպոս դրուեցաւ աղքատներու խնամքին եւ տնտեսութեան համար : Վերջէն երբ անոնք կանոնական իմաստով «եպիսկոպոս» անուանուեցան, անոնց թիւը նախ տասի, յետոյ տասնուերկուքի բարձրացուցին : Ներսէսի ժամանակ, երբ անոնց նշանակութիւնը մեծցած էր, առաքելներն յիշել ուղեւով անոնց թիւը 12ի բարձրացուցին : Այս դէպքը, ինչպէս ծանօթ է, շարունակ կը կրկնուի աղանդներու պատմութեան մէջ²⁹ : 12 թիւը յետոյ հաստատուն պահուեցաւ մինչեւ ԺԸ. դար :

Ուրեմն այս քննութենէն կ'եղբարկացուի, որ Լուսաւորիչի ժամանակ՝ Հայաստանի մէջ կային երեք եպիսկոպոս միայն. ինքը՝ Գրիգոր Լուսաւորիչ, իւր որդին ու աշխատակիցը՝ Արիստակէս, եւ իւր ընդհանուր փոխանորդը՝ Դանիէլ քրիստոնէական Տարօնայ³⁰ :

Քրիստոնէական Մարկուարտ «քրիստոնէական» կը թարգմանէ իմաստին համեմատ իբր «առաքեալ եպիսկոպոս» = Missionsbischof, որ յեկանին կը համապատասխանէ միաբնեաներու περιουδευτης = շրջուն եպիսկոպոսին³¹ : Այդ պաշտօնին մէջ կը տեսնենք Դանիէլը, ձեռնադրուած Լուսաւորիչէն. անոր կեանքն երեք տարեքը դրութիւններու մէջ աւանդուած է, որոնց մին զինքը կը նկատէ կաթողիկոսի ընդհանուր փոխանորդը՝ իրաւասութեան լիազօրութեամբ : Նոյն հանդամանքի մէջ կը գտնենք Մաշթոցը. Կորնել կը պատմէ. «Յետ այնորիկ անոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն (Սահակ) ի կայնեականս (կայեանի վերաբերեալ տեղերը), եւ նա ի սիրելուս հեթանոսաց գրանն կենաց սերմանիցեն³²» : Փոտէն կ'իմա-

²⁹ Անդ, էջ 187 : Ուստիցեւոյ համեմատ՝ Պետրոս կաթողիկոս (1019—1060) ունէր «կաթողիկոս հայրենեաց տուեալ ի թագաւորացն Հայոց»՝ հինգ հարիւր զեղ անուանի եւ մեծանիստ եւ շահաւէտ, ընտիր ընտիր. նոյնպէս եւ եպիսկոպոս հինգհարիւր փառաւոր եւ գաւառապետս ի վերայ եօթն (Երուսաղէմի տպ. «Ե.») հարիւր թեմի հանապաղ. Երկուտասան եպիսկոպոս եւ չորս վարդապետ ի տան հայրապետին եւ վաթսուն երէց ի կրօնաւորաց, եւ յաշխարհականաց հինգհարիւր» (Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898, էջ 153—154) : Համեմատարար նոյնքան մեծ թիւ կը գնէ Աղուաններու համար՝ 200 եպիսկոպոս (անդ, 80—81) :

³⁰ Անդ, էջ 197 :
³¹ Անդ, էջ 188 :
³² Կորնել, Պատմ., Վենետ. 1894, էջ 24 :

նանք թէ Մաշթոց ոչ միայն առաքեալ եպիսկոպոսի պաշտօնն, հապա նաեւ պատիւն ու աստիճանն ունէր, Փոտ կը հաւատայ թէ կարգացած է Թէոդորոսի գրքոյկը «Վասն Մոզութեան ի Պարսս, եւ թէ զի՞նչ իցէ առաւելութիւն բարեպաշտութեան, յերիս բանս», որ ուղղուած է Հայաստանէն եկած Μαστούβιος անուն քրիստոնէականին, եւ կ'ըսէ թէ «այդ Թէոդորոսն՝ Մոպսուեստացին կը թուի ըլլալ», վասն զի Նեստորի հերետիկոսութիւնը, մեղաց ընդհանուր թողութիւնը եւս կը պաշտպանէ³³ : Եւ իրապէս Հայերը Մոպսուեստացւոյն գրութիւնը Պրոկոպ պատրիարքին առջեւ հանած եւ անոր կարծիքը խնդրած էին. թղթակցութիւնը զեռ պահուած է³⁴ :

Նիկիական Հայրերու ցանկին մէջ՝ Ա. Լաւրիական ցանկը հետեւեալ հետաքրքրական ընթերցումը կը կրէ.

- ժԴ. Ի նահանգէն Հայոց Մեծաց
- 107. Arsaphius Sobmon.
- 108. Acrites³⁵.

Arsaphius խեղաթիւրուին է Արիստակէսի. Sobmon կը թուի ասորական բնագիր մը յիշեցնել dsurnio ձեւով. բայց հաւանական է որ Sobmon ըլլայ Տափղոյն = Ծովք. եւ զիտենք թէ Արիստակէս նահատակուեցաւ Ծովքի մէջ. ուստի Արիստակէս եւս առաքեալ եպիսկոպոս մը կ'ըլլայ եւ այն՝ կայսերական հողին վրայ՝ հարաւային Հայաստանի մէջ³⁶ :

Առաքելական մեծ գործունէութիւն մը կը պատմէ Փաւստոս Գրիգորիսի մասին, որ «ի հնգետասանամեկից Եսաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին վրայ եւ Աղուանից, այսինքն սահմանացն Մագֆրաց, երբեալ նորոգեաց անդ գեկեղեցիսն լուսաւոր կարգօք» : Մանուկն Գրիգորիսի շարաշար խոշտանդութիւն ետք մարմինը կը տարուի կը դրուի Ամաբազ, Հարանդ գաւառի մէջ, «առ եկեղեցեան, գոր շինեալ էր առաջնայն մեծին Գրիգորի³⁷» : Մանուկ եպիսկոպոսի սպանութեան կը յաջորդէ Մազրութիւնը բուն արշաւանքը, մինչեւ որ Վաչէ սպարապետ Յունաստանէն

³³ Phot. Bibl. cod. LXXXI, PG 103, 281 :
³⁴ Գրքը Թղթոց, էջ 1—21 : Μαστούβιος այլաձեւուած Μαστούβιος է, որ է Մաշթոց, Ի. դարուն գրուած նաեւ Μαστιχης էն :
³⁵ Մարկուարտ Արիստակէս անունը կ'ուզէ իմանալ «Վահրիճ», զոր կը ստուգարանէ իբր «յաղթող», եւ անմնայն վերապահութեամբ Դանիէլ քրիստոնէականին մակերբ կը համարի զայն, որով Դանիէլ՝ Նիկիոյ ժողովքին մասնակցած կ'ըլլայ. տես Die Entstehung, p. 199—209 :
³⁶ Die Entstehung, p. 199 :
³⁷ Փաւստ., էջ 13—15 :

վերադառնալով դանոնք կրկին ետ կը քշէ : Յոյն-լատին պատմագիրները նման արշաւանք մը չեն յիշեր , բայց կը պատմեն Կոստանդինի նոր կարգադրութիւնը 18 Սեպտ . 335ին , որով եղբորորդին Հանիրաղիանոս իբր վերին իշխան կը դրուի Պոնտոսի , Հայոց եւ Վրաց երկու աւատական թագաւորութիւններու վրայ՝ Կեսարիա մայրաքաղաքով : Այս կարգադրութեան պատճառն էր անտարակոյս հիւսիսահաններու արշաւը , որոնք անգամ մըն ալ ցուցուցին թէ Կովկասի դռները շատ ամուր չէին : Այս հիման վրայ Գրիգորիսի նահատակութեան թուականը կ'իշխայ 335ի դարնան-ամբան , Մազքութներու արշաւը 336ին :

Փաւստոս աշխարհագրորդն ճիշտ կը գետեղէ Հարանդ գաւառը «ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց» (էջ 15) . Գրիգորիս կ'ըլլայ ասով Հայաստանի հիւսիսային սահմանի առաքեալը , ինչպէս որ Արիստակէս հարաւային կողման Ծովաց աշխարհինն էր : Բայց պատմագիրն համեմատ՝ Գրիգորիս միայն կը նորոգէ Աղուաններու եւ Վրաստանի մէջ քրիստոնէութիւնը , զոր իւր պապը՝ Գրիգոր Լուսաւորիչ հոն հաստատած էր եւ մինչեւ իսկ Սմարաղի մէջ եկեղեցի հիմնած : Ազաթանգեղոս եւս Լուսաւորչին առաքելական գործունէութեան սահմանները նոյն տարածութեամբ կու տայ (էջ 439—440) , բայց այդ ընդ ընդլայնումն է Կորիւնի խօսքին , որ աւելի ընդհանուր դժերով կը ներկայացնէ Մաշթոցի քարոզչական ճանապարհը :

Վրաց մասին ապահով գիտենք թէ առաջին անգամ Բակուր թագաւորի ժամանակ քրիստոնէութեան ծանօթացան . հետեւապէս Գրիգորի եւ Գրիգորիսի քարոզչութիւնը դուրս կը մնայ այդ սահմանէն . նոյնպէս կրնանք հաստատել թէ Գրիգոր Աղուաններու մէջ եկեղեցի չէ հիմնած . այդ յերիւրանքը պարզորոշ նուիրապետական նպատակէ մը թելադրուած է , ասով հայ եկեղեցւոյ վերին իշխանութիւնը կանոնական կերպով պիտի հիմնուէր Վրաց եւ Աղուանից եկեղեցիներու վրայ : Իրականին այդ վերին իշխանութիւնը պտուղն է Մաշթոցի եւ Սահակի լայնածաւալ եւ տոկուն գործունէութեան , որուն զբոսապատճառն եղաւ Սեւեկիոյ կաթողիկոսին՝ «Նրան կաթողիկոս»՝ այսինքն ամբողջ Պարսկաստանի պատրիարք տիտղոսի պահանջը . 420ի ժողովքին Իհարալահա կաթողիկոսինը զինք կ'անուանէ նաեւ կաթողիկոս Հայոց , Աղուանից , Վրաց եւն : Ուստի Գրի-

գորիսի վերադրուած «կաթողիկոս Վրաց եւ Աղուանից» տիտղոսը ժամանակագրօրէն սխալ է . պէտք ենք սակայն ընդունիլ թէ մասուկ եպիսկոպոսը քարոզած է Աղուաններուն , ուր ապահով Մաշթոցի քարոզչութեան ժամանակ կա'ր արդէն քրիստոնէութիւն ³⁸ :

Ամփոփելով ըսուածները հայկական թեմերու սկզբնաւորութեան մասին՝ այս համառօտ տեսութիւնը կ'ունենանք .

Գրիգոր Լուսաւորիչի ժամանակ Հայաստանի մէջ երեք եպիսկոպոս կար՝ ինքը , իւր որդին՝ Արիստակէս եւ իւր տեղակալը՝ Գանիէլ քորեպիսկոպոս Տարօնոյ ³⁹ : Ազաթանգեղոսի յիշած Լուսաւորչին ձեռնադրուած 12 (իրականին 7) «եպիսկոպոսները» սարկաւազ էին պարգապէս , աղքատներու հոգաբարձութեան կարգուած ⁴⁰ : Վրթանէսի ժամանակ անոնց երկուքը՝ արքիդիակոն Աղբիանոս եւ Յետաղիոս՝ Որդունի եւ Մանաւազեան նախարարութիւններու բարձումով՝ թեմ ստացան : Միաժամանակ չըլուն եպիսկոպոսներ կը գործէին Հայաստանի մէջ , ծայրագաւառներն ու սահմանէն դուրս , այդպէս էին Դանիէլ քորեպիսկոպոս , մասուկի Գրիգորիս , թերեւս նաեւ Արիստակէս :

* Պ . Է .



³⁸ Վրաց քրիստոնէութեան դարձը դեռ լիովին չէ լուսարանուած . վերջին ժամանակներս նորանոր ուսումնասիրութիւններ նուիրուած են այս հարցին , ուր ազգամոլութիւնն շատ աւել գործած է ու կը գործէ դեռ ջանալով ձերբազատ ընել սկիզբէն ի վեր Վրաց եկեղեցին հայ եկեղեցիէն : Յիշենք՝ Kekelidze, Die Bekehrung Georgiens zum Christentum, ի թերթին Morgenland, Darstellungen aus Geschichte und Kultur des Ostens, Heft 18, Berlin 1928, Ինքնին Մարկուարտ՝ Die Bekehrung Iberiens und die beiden ältesten Dokumente der iberischen Kirche, Caucasia, fasc. 7, Leipzig 1931, p. 111—168. P. Peeters, Les débuts du christianisme en Géorgie d'après les sources hagiographiques, Analecta Bollandiana, tome L, 1932, p. 5—58. Gregor Peradze, Die Probleme der ältesten Kirchengeschichte Georgiens, Oriens Christianus, Leipzig 1932, p. 153—171. Ասոնց կարեւորութեան համեմատ , բաց ի Մարկուարտէ , չէ կարելի ուրանալ Լուսաւորչին եւ աւել ընդարձակ սահմանով Գրիգորիսի քարոզչութիւնը Վրաստանի մէջ . զայս կը հաստատէ Վրաց հնագոյն աւանդութիւնը , որ յետագայ դարերուն դիտարկեալ եղծումներ կրած էր Բագրատունի Պրոֆ . Մարկուարտ , որ քաջածանօթ էր արեւելեան բազմաթիւ լեզուներու , կարեւոր չէ համարած ուսումնասիրել Վրացերէնն ու վրական գրականութիւնը . եւ այդ պակասը հոս յաւ կը զգացուի :

³⁹ Die Entstehung, p. 197 :

⁴⁰ Անդ , էջ 186 :

ԱՐՈՒԵՍԸ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՄԷ՞՞*

Վերջին ժամանակներու մէջ է որ զերտութիւնը շահաքրքրուելու սկսած է հայ արուեստով հայ հողին վրայ : Այս պատճառաւ զարմանալի է որ հայ արուեստը արտաքոյ Հայաստանի ուշադրութեան առարկայ եղած չէ ցայսօր : Այսու հանդերձ հայ արուեստը միշտ գոյութիւն ունեցած է այն միջավայրերու մէջ , ուր իր հայրենիքէն տարադրուած հայութիւնը յընթացս քաղաքական դէպքերու ապաստանած եւ ապրած է :

Պատմութեան մէջ հայութեան տարազիր հատուածներ մէկէ աւելի անգամներ Սեւ Ծովու հիւրընկալ արեւուն վրայ դատած են իրենց ոտից դադար : Հանրածանօթ են ԺԱ.—ԺԳ. դարերու մէջ կատարուած գաղթերը դէպի թաթարական երկիրները ընդ մէջ Աստրախանի եւ Կաղանի , ինչպէս նաեւ դէպի Ազսուրայ եւ Խրիմ / Սակայն հո՞՞ բազմութեամբ Հայեր ապրած են մանաւանդ Խրիմի ձեռնովահան գաղութներու մէջ : Տեղւոյն թուրք խիջախ լեզուն իւրացնելէ վերջը Հայերը եղան յարաբերութեան կարեւոր աղբակ ձեռնովահան վաճառականներու եւ թաթարական ժողովուրդներու միջեւ : Մինչեւ ԺԵ . դարուն կէսերը Խրիմի մէջ ծաղկեալ վիճակ մ'ունեցած է Կաֆա քաղաքը , ուր զուտ հայաբնակ թաղ մըն ալ կար իր մօտ քառասուն եկեղեցիներով : Անոնցմէ ոմանք դեռ մինչեւ այսօր կանգուն կեցած են այժմեան Ֆեոդոսիայի մէջ , ինչպիսի են Ս . Յովհան Ոսկերեան , Ս . Ստեփանոս , Ս . Գրիգոր , Ս . Սարգիս , Ս . Յովհաննէս Մկրտիչ եւ Գարբիէլ եւ Միքայէլ հրեշտակապետներու եկեղեցիները :

Միջին դարու մէջ վաճառականական սերտ յարաբերութիւն գոյութիւն ունէր ձեռնովահան Կաֆայի եւ Լեհաստանի ծաղկեալ եւ վաճառաշահ Լեմբերգ (Լվով) քաղքին միջեւ , ուր նոյն առեւ կ'ապրէր եւրոպական հողամասին վրայ ամէնէն աւելի խորամուկ հայ պատկանիչ հատուած մը : Կաֆայի հայ հարուստ վաճառականները իրենց Լեմբերգի կրօնակիցներուն նուիրած են քարաչէն մայր-եկեղեցի մը , որուն շինութիւնը 1363ին աւարտած էր : Եկեղեցւոյն շինութեանէն չորս տարի յետոյ Լեմբերգի մէջ իր թեմական աթոռ կը

* Յօդուածս ուղարկած է մեզ Դոկտ . Թ . Մանկավսի ի Լեմբերգ , գրուած գերմաներէն լեզուով , գոր կը ներկայացնենք մեր ընթերցողներու հայրենիքարգումբեամբ Մեծ . Հ . Պողիկայանս վ . Սամուէլեանի : ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

հաստատէ էջմիածնի կաթողիկոսին ենթակայ հայ եպիսկոպոս մը :

Կաֆայի միջնադարեան հայ եկեղեցիները եւ Լեմբերգի մայր եկեղեցին միեւնոյն ճարտարապետութիւնն ունին : Սակայն ո'չ մին , ո'չ միւսը չունին այն նկարագրական գծերը , որոնք յատուկ են Հայաստանի եկեղեցիներուն : Ասոնց կողակները (abside) արտաքուստ ուղղահայեաց պատով մը կը վերջանան , մինչդեռ գաղութային արուեստը նոյները եկեղեցւոյ պատէն դուրս փոխադրած է : Այս կերպով շինուած եկեղեցիներուն արտաքին պատերը չունին եւ ոչ ալ այն ուղղաձիգ եռանկիւնի ծերպերը , այն զարդագործ կապ-կամարները , որոնք յատուկ են Անիի մայր եկեղեցւոյն եւ Հայաստանի այլ եկեղեցիներուն : Կաֆայի հայ եկեղեցիները եւ Լեմբերգի մայր եկեղեցին բնիկ հայկական ճարտարապետութեան հեռանալով՝ յոյն-բուզանդական ոճով կողակները եկեղեցւոյ պատէն դուրս կը գետեղեն եւ դմբէթները թրծուն կաւ աղիւսներով կը սկսին յորինել : Սակայն , չնայած այս օտար ազդեցութեան , անոնք ընդհանրապէս պահած են իրենց հայ նկարագիրը , այնու որ անոնց ճարտարապետական չափակցութիւնը բուզանդականէն կը տարբերի : Ի մասնաւորի՝ կառուցուածքներուն ներքինը ներքաւարտագոյն ձեւեր ունի , ինչպէս Լեմբերգի եկեղեցւոյն ներքինը իր նրբակերտ սիւներով , սրածայր եւ իշու կոնախին նմանութիւնը բերող կամարներով եւն : Դիտողը վայրկեան մ'իսկ չ'երկբայի ըսելու թէ այս շինութիւնները ծնունդն են անցեալ բարձր քաղաքակրթութեան մը , որ զիտցած է ի մասնաւորի ճարտարապետական ասպարիզին վրայ դարգացնել իր կարողութիւնները : Այս իրողութեան ցայտուն ապացոյց են զլիսաւորաբար Լեմբերգի մայր եկեղեցին , նոյնպէս ԺԳ . դարէն Յովհ . Մկրտչի եւ Հրեշտակապետայ եկեղեցիները Կաֆայի մէջ : Ասոնք միաժամանակ կը մնան հայ գաղութային ճարտարապետութեան նկարագրական շինուածքները : Խրիմի եւ Լեհաստանի միջեւ գտնուող երկիրներու մէջ . Պ . Ս . Մոլդաւիոյ մէջ , բնաւ չենք հանդիպիլ վերոյիշեալ եկեղեցիներուն համասեռ շինուածքներու : Այն երկիրներու հայ գաղութակառնութիւնները շատ աւելի յետագոյն ժամանակէ են : Եօրդա¹ կ'ընդունի թէ մոլդաւիական հայ գաղութները Կաֆայէ եկած

¹ Yorga M., Sur l'origine des arméniens de Moldavie, Monum. armenologica, Wien 1927, S. 151.